



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2 մարտի 2026 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան հետևյալ կազմով՝

նախագահող դատավոր՝ Ա.Ա. Դրոնովի,

զեկուցող դատավոր՝ Ա.Ա. Ջաբարայի,

դատավորներ՝ Է.Վ. Հայրիյանի, Դ.Պ. Ալեքսանդրովի, Կ.Կ. Ջունուշպաևի, Ե.Ժ. Իսմայիլովի, Մ.Տ. Կայիպովի, Ա.Բ. Կիշկեմբաևի, Ն.Վ. Պավլովայի, Ա.Գ. Թունյանի,

մասնակցությամբ՝ դատական նիստի քարտուղար Մ.Ա. Նաումչիկի,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-47-րդ, 68-69-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով,

Խորհրդատվական եզրակացություն է տրամադրում՝ ըստ Ղրդգստանի Հանրապետության՝ ի դեմս Ղրդգստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն առընթեր դատական ներկայացուցչության կենտրոնի, «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթների պարզաբանման վերաբերյալ դիմումի:

I. Դիմողի հարցերը եւ պարզաբանման առարկան

1. Ղրդգստանի Հանրապետությունը՝ ի դեմս Ղրդգստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն առընթեր դատական ներկայացուցչության կենտրոնի, դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) այն դրույթների պարզաբանման խնդրանքով, որոնք վերաբերում են աշխատանքի տեղավորման պետությունում Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն, ԵԱՏՄ) անդամ պետության աշխատավորի ընտանիքի անդամների պարտադիր բժշկական ապահովագրությանը եւ բժշկական օգնությանը:

2. Դիմողը նշում է, որ Պայմանագրի 98-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները, որոնց համաձայն՝ անդամ պետությունների աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը (սոցիալական ապահովագրությունը) (բացի կենսաթոշակային ապահովությունից) իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների համար կիրառվող նույն պայմաններով եւ նույն կարգով, նախատեսում են պարտադիր բժշկական ապահովագրության հասանելիություն ստանալու հնարավորություն նաեւ աշխատավորների ընտանիքի անդամների համար: Ըստ դիմողի՝ դա բխում է Պայմանագրի 98-րդ հոդվածի 3-րդ կետի եւ 96-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթների փոխկապակցված ընթերցումից, որը բացահայտում է «սոցիալական ապահովություն (սոցիալական ապահովագրություն)» հասկացությունը:

Դիմողը նաեւ կարծում է, որ Պայմանագրի 98-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների տրամաբանական շարունակությունը եւ տվյալ կետով նախատեսված՝ աշխատավորների ու նրանց ընտանիքների անդամների իրավունքների ընդհանուր երաշխիքների մասն են կազմում Պայմանագրի 98-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները, որոնք սահմանում են, որ անդամ պետությունների

աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների՝ շտապ բժշկական օգնություն (արտակարգ եւ անհետաձգելի վիճակներում) եւ այլ բժշկական օգնություն ստանալու իրավունքը կարգավորվում է Պայմանագրի թիվ 30 հավելվածով (Անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնություն ցուցաբերելու մասին արձանագրություն, այսուհետ՝ Բժշկական օգնության մասին արձանագրություն), ինչպես նաեւ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ եւ միջազգային պայմանագրերով, որոնց մասնակից է տվյալ պետությունը:

Բժշկական օգնության մասին արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ աշխատանքի տեղավորման պետությունն անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ցուցաբերումն ապահովում է աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ ու միջազգային պայմանագրերով սահմանված կարգով եւ պայմաններով: Ըստ դիմողի՝ նշված կետում ամրագրված են հղումային նորմեր Պայմանագրի դրույթներին, մասնավորապես՝ վերոնշյալ 98-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին:

Բժշկական օգնության մասին արձանագրության 5-րդ կետի առնչությամբ՝ դիմումի մեջ նշվում է, որ պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը կարող է դասվել այն միջոցների աղբյուրներին, որոնց հաշվին հնարավոր է աշխատավորի ընտանիքի անդամներին մատուցված բժշկական ծառայությունների արժեքի վճարումը:

3. Մատնանշելով Պայմանագրի եւ Բժշկական օգնության մասին արձանագրության դրույթների մեկնաբանման տարբեր մոտեցումները՝ դիմողը խնդրում է կայացնել Խորհրդատվական եզրակացություն հետեւյալ հարցերի վերաբերյալ.

- Արդյո՞ք ճիշտ է Պայմանագրի 98-րդ հոդվածի 3-րդ կետի այն ընկալումը, որ ԵԱՏՄ անդամ պետությունները պետք է աշխատավորների ընտանիքի անդամների համար ապահովեն պարտադիր բժշկական ապահովագրության

հասանելիություն՝ սեփական քաղաքացիների հետ հավասար չափով,

- Պայմանագրի 98-րդ հոդվածի 4-րդ կետի եւ Բժշկական օգնության մասին արձանագրության հիման վրա բժշկական օգնություն տրամադրելիս, անդամ պետությունների ազգային օրենսդրության շրջանակներում արդյո՞ք պետք է հաշվի առնվեն Պայմանագրի 98-րդ հոդվածի 3-րդ կետի՝ աշխատավորների ընտանիքի անդամներին պարտադիր բժշկական ապահովագրության հասանելիություն տրամադրելու վերաբերյալ դրույթները:

4. Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի (Պայմանագրի թիվ 2 հավելված, այսուհետ՝ Ստատուտ) 46-րդ կետին համապատասխան՝ Դատարանն իրականացնում է Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանում:

Դատարանի կողմից պարզաբանման իրականացումը ենթադրում է Խորհրդատվական եզրակացության տրամադրում եւ անդամ պետություններին չի զրկում միջազգային պայմանագրերը համատեղ մեկնաբանելու իրավունքից (Ստատուտի 47-րդ կետ):

Հաշվի առնելով Դատարանի ձեւավորված պրակտիկան՝ Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերի եւ ակտերի դրույթների պարզաբանումը կայանում է Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների կոնկրետ դրույթների բովանդակության բացահայտման եւ իմաստի վերհանման մեջ (2025 թվականի ապրիլի 14-ի թիվ R-7/24 գործով Խորհրդատվական եզրակացության 4-րդ կետ, 2025 թվականի ապրիլի 25-ի թիվ R-2/25 գործով Խորհրդատվական եզրակացության 3-րդ կետ):

Հաշվի առնելով ստացված դիմումի բովանդակությունը, դիմողի հարցերի տրամաբանությունը եւ փոխկապակցվածությունը՝ սույն գործով պարզաբանման են ենթակա Պայմանագրի 98-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերության, 98-րդ հոդվածի 4-րդ կետի, ինչպես նաեւ Բժշկական օգնության մասին արձանագրության դրույթները:

5. Դատարանը, պարզաբանման վերաբերյալ գործերով դատավարություն իրականացնելով, ըստ ընդհանուր կանոնի, պարզաբանում է Միության իրավունքի նորմերը in abstracto՝ չլուծելով իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ կոնկրետ վեճեր (ինչն օբյեկտիվորեն անթույլատրելի է դատավարության տվյալ տեսակի դեպքում) եւ չանդրադառնալով Միության անդամ պետությունների ազգային օրենսդրության պարզաբանմանը:

Դատարանի՝ Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների իրացման հարցերով առաջացող վեճերի քննության իրավասությունը սահմանվում է Ստատուտի 39-րդ կետի դրույթներով: Հետեւաբար, մասնակիցների՝ Պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունների կատարման լրիվության գնահատումը տվյալ պարզաբանման առարկա չէ:

II. Ընթացակարգը Դատարանում

6. Ստատուտի 68-րդ կետի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ):

7. Գործը քննության նախապատրաստելու շրջանակներում, Կանոնակարգի 75-րդ հոդվածի կարգով, դիմողի առաջադրած հարցերի վերաբերյալ հարցվել են լրացուցիչ տեղեկություններ եւ կարծիքներ այն անդամ պետությունների պետական մարմիններից, որոնց իրավասությանն է վերապահված պարտադիր բժշկական ապահովագրության եւ բժշկական օգնության ցուցաբերման հարցերը, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ որպես Միության մշտապես գործող կարգավորող մարմին, դիրքորոշումը:

Համապատասխան տեղեկատվությունը Դատարան է ներկայացրել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը եւ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, Բելառուսի Հանրապետության առողջապահության նախարարությունը եւ աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության նախարարությունը, Ղազախստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը եւ աշխատանքի եւ բնակչության սոցիալական պաշտպանության նախարարությունը, Ղրղզստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը եւ աշխատանքի, սոցիալական ապահովության եւ միգրացիայի նախարարությունը, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովը:

III. Դատարանի եզրահանգումները

8. Առաջնորդվելով Ստատուտի 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան արդարադատություն իրականացնելիս, այդ թվում՝ պարզաբանման վերաբերյալ գործերով, կիրառում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը, Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը, Միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները, միջազգային սովորույթը՝ որպես համընդհանուր գործելակերպի ապացույց, որը ճանաչված է որպես իրավական նորմ:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա, Կոնվենցիա) «Մեկնաբանման ընդհանուր կանոնը» 31-րդ հոդվածին համապատասխան՝ միջազգային պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաեւ հաշվի առնելով պայմանագրի օբյեկտը եւ նպատակները:

Համաձայն 5-րդ հոդվածի՝ նշված Կոնվենցիան կիրառվում է ցանկացած այն

պայմանագրի նկատմամբ, որը միջազգային կազմակերպության հիմնադիր ակտ է, եւ ցանկացած այն պայմանագրի նկատմամբ, որն ընդունվել է միջազգային կազմակերպության շրջանակներում՝ առանց վնաս հասցնելու տվյալ կազմակերպության համապատասխան կանոններին:

9. 2014 թվականի մայիսի 29-ի Պայմանագրով պետությունները հիմնադրել են Եվրասիական տնտեսական միությունը՝ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպությունը, որն օժտված է միջազգային իրավասուրյեկտությամբ: Միության շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի շարժի ազատությունը, համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը տնտեսության այն ճյուղերում, որոնք սահմանված են Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով (Պայմանագրի 1-ին հոդված):

Պայմանագիրը սահմանում է Միության իրավասությունը, նպատակները, գործունեության հիմնական սկզբունքները (Պայմանագրի 3-5-րդ հոդվածներ) եւ ունի առաջնահերթություն դրա եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի միջեւ հակասությունների առաջացման դեպքում: Պայմանագրին չպետք է հակասեն Միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները: Բացի այդ, Միության հիմնական նպատակներին, սկզբունքներին եւ գործունեության կանոններին չպետք է հակասեն նաեւ երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրերը (Պայմանագրի 6-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետեր):

Պայմանագիրը չի խոչընդոտում անդամ պետությունների կողմից միջազգային այն պայմանագրերի կնքումը, որոնք չեն հակասում դրա նպատակներին ու սկզբունքներին: Անդամ պետությունների միջեւ երկկողմ միջազգային պայմանագրերը, որոնցով Պայմանագրի կամ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի դրույթների հետ

համեմատությամբ նախատեսվում է ինտեգրման ավելի խորը մակարդակ, կամ որոնցով հոգուտ իրենց ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձանց ապահովվում են լրացուցիչ առավելություններ, կիրառվում են դրանք կնքած պետությունների միջեւ հարաբերություններում եւ կարող են կնքվել՝ պայմանով, որ դրանք չեն տարածվելու այդ եւ մյուս անդամ պետությունների կողմից Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված իրենց իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարման վրա (Պայմանագրի 114-րդ հոդված):

Վերոշարադրյալի հիման վրա Պայմանագիրը (այդ թվում՝ դրա նպատակներն ու սկզբունքները) ԵԱՏՄ իրավունքի համակարգի ձեւավորող տարր է, որով պայմանավորված է Միության շրջանակներում անդամ պետությունների այլ միջազգային պարտավորությունների բովանդակությունը եւ ծավալը:

10. Պայմանագրի 3-րդ հոդվածի առաջին մասի ուժով միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների հարգումը Միության գործունեության իրականացման հիմքն է: Միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին են դասվում, ի թիվս այլոց, պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը, մարդու իրավունքների համընդհանուր հարգման սկզբունքը, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքը:

Պայմանագիրը կնքելիս, որով հիմնադրվում է Միությունը եւ սահմանվում են միջպետական տնտեսական ինտեգրման ոլորտային հիմքերը, դրա մասնակիցները ղեկավարվել են պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքով, մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների գերակայության սկզբունքն անվերապահորեն պահպանելու անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ հաստատել են իրենց հավատարմությունը Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող այլ սկզբունքների ու նորմերի (Պայմանագրի նախաբանի երրորդ եւ տասներորդ պարբերություններ):

11. Միության իրավական համակարգում միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքները լրացվում եւ փոխգործակցում են Միության գործունեության այլ սկզբունքների հետ, մասնավորապես՝ փոխշահավետ համագործակցության, իրավահավասարության եւ Կողմերի ազգային շահերը հաշվի առնելու սկզբունքի հետ: Անդամ պետությունները համատեղ մշակում եւ սահմանում են իրենց կողմից որոշված ոլորտներում կարգավորման իրավական հիմքերը:

Ընդ որում, Պայմանագրի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքը, որի համաձայն՝ անդամ պետությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում Միության կողմից իր գործառույթների կատարման համար եւ ձեռնպահ են մնում այնպիսի միջոցներից, որոնք կարող են վտանգել Միության նպատակների իրագործումը, ուղղակիորեն կողմնորոշում է պետություններին տվյալ միջպետական միավորման նպատակների իրագործմանը:

12. Ելնելով Պայմանագրի 4-րդ հոդվածից՝ Միության հիմնական նպատակներին է դասվում ինչպես ապրանքների, ծառայությունների, կապիտալի, այնպես էլ աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ձեւավորումը, ինչը լիովին համապատասխանում է Միության էությանը՝ որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպության, որը հիմնադրվել է դրա շրջանակներում միասնական տնտեսական տարածք ստեղծելու նպատակով:

Ինչպես բխում է Պայմանագրի կառուցվածքից, XXVI բաժինը՝ «Աշխատանքային միգրացիա» (96-98-րդ հոդվածներ), Պայմանագրի «Միասնական տնտեսական տարածք» երրորդ մասի բաղկացուցիչ տարրն է եւ ուղղված է տնտեսական նպատակների իրագործմանը:

Հիմնվելով Պայմանագրի նորմերի համակարգային մեկնաբանման վրա՝ Դատարանի մեծ կոլեգիան արձանագրում է, որ աշխատուժի ազատ տեղաշարժը Միության ներքին շուկայի գործունեության տարրերից մեկն է:

Տնտեսական ինտեգրումը, Միության շրջանակներում միասնական շուկայի ձեւավորումն ապահովվում են նաեւ Միությունում աշխատանքային միգրացիայի

համար բարենպաստ պայմանների, այդ թվում՝ աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական իրավունքների երաշխիքների ստեղծմամբ:

13. Պայմանագրի 96-րդ հոդվածը կարգավորում է աշխատանքային միգրացիայի ոլորտում անդամ պետությունների համագործակցության կարգն ու ձեւերը, ինչպես նաեւ բացահայտում է Պայմանագրի «Աշխատանքային միգրացիա» XXVI բաժնում կիրառվող հասկացությունների բովանդակությունը:

Պայմանագրի XXVI բաժնի համատեքստում «անդամ պետության աշխատավոր» ասելով պետք է հասկանալ անդամ պետության քաղաքացի հանդիսացող անձ, որն օրինական հիմքով գտնվում է օրինական հիմքով աշխատանքային գործունեություն է իրականացնում աշխատանքի տեղավորման պետության տարածքում, որի քաղաքացին չէ եւ որտեղ մշտապես չի բնակվում: Միեւնույն ժամանակ, «աշխատանքային գործունեություն» ասելով պետք է հասկանալ աշխատանքային պայմանագրի հիման վրա իրականացվող գործունեություն կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) հետ կապված գործունեություն, որն իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության տարածքում՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան (Պայմանագրի 96-րդ հոդվածի 5-րդ կետի տասներորդ եւ տասնմեկերորդ պարբերություններ):

Պայմանագրի 96-րդ հոդվածի 5-րդ կետի տասներկուերորդ պարբերությանը համապատասխան՝ աշխատավորի «ընտանիքի անդամ» են համարվում՝ անդամ պետության աշխատավորի հետ ամուսնության մեջ գտնվող անձը, ինչպես նաեւ նրա խնամքի տակ գտնվող երեխաները եւ այլ անձինք, որոնք, աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը համապատասխան, համարվում են ընտանիքի անդամներ:

Պայմանագրի 97-րդ հոդվածի պահանջների ուժով՝ անդամ պետության աշխատավորի աշխատանքային գործունեությունը կարգավորվում է աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ՝ հաշվի առնելով Պայմանագրի

դրույթները (4-րդ կետի առաջին պարբերություն): Այդ անձանց ներգրավելն աշխատանքային գործունեությանը հնարավոր է առանց հաշվի առնելու աշխատանքի ներքին շուկայի պաշտպանության մասով սահմանափակումները, եւ աշխատանքի տեղավորման պետությունում չի պահանջվում դրա իրականացման թույլտվության ստացում (1-ին կետ): Անդամ պետությունները չեն սահմանում եւ չեն կիրառում աշխատանքի ազգային շուկայի պաշտպանության նպատակով իրենց օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ՝ բացառությամբ ազգային անվտանգության եւ հասարակական կարգի ապահովման նպատակով Պայմանագրով եւ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ անդամ պետության աշխատավորների կողմից իրականացվող աշխատանքային գործունեության, զբաղմունքի տեսակի եւ գտնվելու տարածքի առնչությամբ սահմանափակումների (2-րդ կետ):

Աշխատանքի տեղավորման պետության տարածքում անդամ պետության աշխատավորի եւ նրա ընտանիքի անդամների ժամանակավոր գտնվելու (բնակության) ժամկետը պայմանավորված է աշխատավորի կնքած աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի գործողության ժամկետով (Պայմանագրի 97-րդ հոդվածի 5-րդ կետ):

Բերված նորմերի փոխկապակցված ընթերցումը վկայում է այն մասին, որ աշխատանքային միգրացիայի հարաբերությունների առնչությամբ աշխատավորի եւ նրա ընտանիքի անդամների իրավական վիճակը Պայմանագիրը կապակցում է աշխատանքի տեղավորման պետության տարածքում այդ անձանց գտնվելու օրինականության եւ անդամ պետության աշխատավորի կողմից աշխատանքային գործունեության իրականացման հետ:

14. Անդամ պետությունների աշխատավորների կողմից այն անդամ պետություններում աշխատանքային գործունեության իրավունքի իրացման նպատակով, որոնց քաղաքացիները նրանք չեն, Պայմանագրի 98-րդ հոդվածում ամրագրված են այդ աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների մի շարք իրավունքներ եւ պարտականություններ, որոնք անհրաժեշտ են անդամ

պետությունների աշխատավորների արդյունավետ ներգրավմանը եւ Միության շրջանակներում աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ձեւավորմանը նպաստելու համար: Ընդ որում, Պայմանագիրը տարանջատում է սոցիալական ապահովությունը (սոցիալական ապահովագրությունը) եւ բժշկական օգնություն ստանալու իրավունքը՝ դրանք առանձնացնելով որպես առանձին կատեգորիաներ եւ ամրագրելով Պայմանագրի 98-րդ հոդվածի տարբեր կետերում:

15. Պայմանագրի 98-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերության համաձայն, որի վերաբերյալ պարզաբանումը պահանջվում է սույն գործով, անդամ պետությունների աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը (սոցիալական ապահովագրությունը) (բացի կենսաթոշակային ապահովությունից) իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների համար կիրառվող նույն պայմաններով եւ նույն կարգով:

Պայմանագրի 96-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներից, որը պարունակում է Պայմանագրի XXVI բաժնում օգտագործվող մի շարք հասկացություններ, երեւում է, որ աշխատանքային միգրացիայի ոլորտում Միության անդամ պետությունները սոցիալական ապահովություն ասելով հասկանում են անձանց սոցիալական ապահովագրությունը՝ մասնավորապես դրա կոնկրետ տեսակները՝ ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության դեպքում պարտադիր ապահովագրություն, արտադրությունում դժբախտ պատահարներից եւ մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրություն ու պարտադիր բժշկական ապահովագրություն:

Այսպիսով, հաշվի առնելով դիմողի առաջին հարցը, Դատարանի մեծ կոլեգիան արձանագրում է, որ Պայմանագրի 98-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է Միության անդամ պետությունների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունը՝ աշխատանքի տեղավորման պետությունում նախատեսված սոցիալական ապահովությունը (սոցիալական

ապահովագրությունը), այդ թվում՝ պարտադիր բժշկական ապահովագրությունն անդամ պետությունների աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների համար իրականացնել նույն պայմաններով եւ նույն կարգով, ինչ որ այն պետության քաղաքացիների համար, որի տարածքում իրականացվում է աշխատանքային գործունեությունը:

Պայմանագրում ներառելով տվյալ դրույթը՝ պետությունները, հաշվի առնելով միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող *pacta sunt servanda* սկզբունքը, դրանով իսկ ստանձնել են պարտավորություն՝ Պայմանագրի սկզբունքների եւ նպատակների համատեքստում դրա բարեխիղճ կատարման վերաբերյալ:

Ընդ որում, պարտադիր բժշկական ապահովագրության իրավահարաբերությունները (այդ թվում՝ դրա պայմանները եւ իրականացման կարգը, ֆինանսավորման աղբյուրները, ցուցաբերվող բժշկական օգնության տեսակներն ու ծավալները սահմանող) սահմանվում եւ կարգավորվում են բացառապես ազգային օրենսդրությամբ: Նման օրենսդրության կիրառման հարցերի պարզաբանումը Պայմանագրով վերապահված չէ Միության դատարանի իրավասությանը:

Դրանով պայմանավորված՝ Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ տվյալ իրավահարաբերությունների ներպետական կարգավորման իրականացումն անդամ պետության ինքնիշխան հայեցողական լիազորությունն է:

16. ԵՍՏՄ շրջանակներում միգրացիոն գործընթացներում ներգրավված անձանց համար սոցիալական իրավունքների ծավալը հետեւողականորեն աճում է՝ ինտեգրման զարգացմանը զուգընթաց: Այսպես, եթե Միասնական տնտեսական տարածքի եւ «Աշխատող միգրանտների եւ նրանց ընտանիքի անդամների իրավական կարգավիճակի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի շրջանակներում սոցիալական ապահովությունը (սոցիալական ապահովագրությունը), այդ թվում՝ պարտադիր բժշկական ապահովագրությունը, նախատեսվում էր բացառապես հենց աշխատող միգրանտների նկատմամբ, իսկ

դրա իրավական կարգավորումն իրականացվում էր ընդունող պետության օրենսդրությանը համապատասխան (նշված Համաձայնագրի 11-րդ հոդված), ապա «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում Միության շրջանակներում այդ հարցերի կարգավորումն աշխատանքային միգրացիայի համատեքստում ընդլայնվել է կոնկրետացվել է՝ ըստ անձանց շրջանակի (ավելացվել են աշխատավորի ընտանիքի անդամները), ըստ իրականացման ռեժիմի (անձանց երկու կատեգորիաների համար՝ նույն պայմաններով էլ նույն կարգով, ինչ որ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների համար):

Այսպիսով, տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ընթացքում անդամ պետությունների փոխգործակցության արդյունքները վկայում են Միության շրջանակներում միգրացիոն գործընթացներում անմիջականորեն ներգրավված անձանց սոցիալական պաշտպանության մակարդակի փուլային բարձրացման մասին, որն ուղղված է աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի զարգացմանը՝ որպես ԵԱՀԿ հիմնական նպատակներից մեկը (Պայմանագրի 4-րդ հոդված):

Դա հաստատվում է նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 12 որոշմամբ հաստատված՝ Մինչև 2025 թվականը եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղություններով, որոնց համաձայն՝ աշխատանքային միգրացիայի ոլորտում ինտեգրման հեռանկարային ուղղություններն են Միության շրջանակներում աշխատանքային ռեսուրսների ազատ տեղաշարժի հետագա ապահովումը, աշխատանքի տեղավորման պետությունում աշխատավորների էլ նրանց ընտանիքների անդամների գտնվելու բարենպաստ պայմանների ստեղծումը, ինչպես նաև այդ անձանց բժշկական ծառայությունների մատուցումը:

Պետությունների կողմնակցությունը Պայմանագրի նպատակներին ու սկզբունքներին հաստատվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն

խորհրդի անդամների կողմից 2023 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունված՝ Մինչև 2030 թվականը եւ մինչև 2045 թվականն ընկած ժամանակահատվածում Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տնտեսական գործընթացների հետագա զարգացման մասին «Եվրասիական տնտեսական ուղի» հռչակագրով: Մինչև 2030 թվականը ԵԱՏՄ շրջանակներում տնտեսական ինտեգրումային գործընթացների հետագա զարգացման խնդիրներից մեկը Հռչակագրով, մասնավորապես, սահմանվել է ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտներում տնտեսական համագործակցության զարգացումը՝ աշխատանքի տեղավորման պետությունում անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնություն ցուցաբերելու միջոցով՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան:

17. Բացի սոցիալական ապահովությունից՝ Պայմանագրի 98-րդ հոդվածը կարգավորում է նաեւ անդամ պետությունների աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների՝ բժշկական օգնություն ստանալու իրավունքը: Այդ իրավունքի կարգավորման կարգը սահմանված է Պայմանագրի 98-րդ հոդվածի 4-րդ կետով:

Դատարանի մեծ կոլեգիան ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ Պայմանագրի 98-րդ հոդվածի համատեքստում պարտադիր բժշկական ապահովագրությունը եւ բժշկական օգնությունն առողջապահության ոլորտում կարգավորման տարբեր եւ իրավական առումով ինքնուրույն տարրեր են: Դրա մասին են վկայում ինչպես տվյալ հոդվածի կառուցվածքը (համապատասխանաբար 3-րդ եւ 4-րդ կետերը), այնպես էլ նշված իրավահարաբերությունները կարգավորող նորմերի բովանդակությունը (հաշվի առնելով Բժշկական օգնության մասին արձանագրությունը՝ Պայմանագրի թիվ 30 հավելված), դրանցում համընկնող իրավական կարգավորման առարկայի բացակայությունը:

Պարտադիր բժշկական ապահովագրությունը սոցիալական

ապահովագրության տեսակ էլ ապահովագրված անձին համապատասխան պետական ծրագրերի շրջանակներում ապահովագրական միջոցների հաշվին բժշկական օգնության ցուցաբերման երաշխիքների ֆինանսատնտեսական ապահովման մեխանիզմ է: Ընդ որում, պարտադիր բժշկական ապահովագրությունը բժշկական օգնության որել տեսակ չէ, այլ սահմանում է դրա ֆինանսավորման եւ տրամադրման կարգն ու պայմանները:

18. Պայմանագրի 98-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների՝ շտապ բժշկական օգնություն (արտակարգ եւ անհետաձգելի վիճակներում) եւ այլ բժշկական օգնություն ստանալու իրավունքը կարգավորվում է 30-րդ հավելվածով, ինչպես նաեւ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ եւ այն միջազգային պայմանագրերով սահմանված կարգով, որոնց մասնակիցն է այդ պետությունը:

Պայմանագրի 98-րդ հոդվածի 4-րդ կետի՝ բժշկական օգնության ստացումը կարգավորող աղբյուրների վերաբերյալ դրույթներին համապատասխանում են Բժշկական օգնության մասին արձանագրության (Պայմանագրի թիվ 30 հավելված) 3-րդ կետի նորմերը, որոնց համաձայն՝ աշխատանքի տեղավորման պետությունն անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ցուցաբերումն ապահովում է աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ եւ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով ու պայմաններով:

Ընդ որում, հաշվի առնելով նշված նորմատիվ դրույթների համատեքստը, ինչպես նաեւ Պայմանագրի XXVI բաժնի իրավական տեխնիկան («սույն Պայմանագիր» բնորոշ ձեւակերպման օգտագործումը՝ Պայմանագրի 97-րդ հոդվածի 2-րդ եւ 4-րդ կետեր, 98-րդ հոդվածի 1-ին եւ 10-րդ կետեր), Դատարանի մեծ կոլեգիան եզրահանգում է, որ «միջազգային պայմանագրեր» եզրույթը նշանակում է անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրեր (համաձայնագրեր), բացի «Եվրասիական տնտեսական միության մասին»

2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրից, որոնք առնչվում են բժշկական օգնության հարցերին: Դրանց, մասնավորապես, կարող են դասվել ներկայումս գործող «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիներին բժշկական օգնություն ցուցաբերելու մասին» 1997 թվականի մարտի 27-ի համաձայնագիրը, Բելառուսի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ Ռուսաստանի Դաշնության առողջապահական հիմնարկներում Բելառուսի Հանրապետության քաղաքացիներին եւ Բելառուսի Հանրապետության առողջապահական հիմնարկներում Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներին բժշկական օգնություն ցուցաբերելու կարգի մասին 2006 թվականի հունվարի 24-ի համաձայնագիրը:

Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ Պայմանագրի շրջանակներում անդամ պետությունների աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների՝ բժշկական օգնություն ստանալու իրավունքի կարգավորման կարգը սահմանվում է Բժշկական օգնության մասին արձանագրության կանոններով: Նշված իրավունքի կարգավորումը Պայմանագրի այլ դրույթներով (այդ թվում՝ 98-րդ հոդվածի 3-րդ կետով) նախատեսված չէ:

Այսպիսով, Պայմանագրի 98-րդ հոդվածի 4-րդ կետի եւ Բժշկական օգնության մասին արձանագրության 3-րդ կետի դրույթների համակցված ընթերցումը Դատարանի մեծ կոլեգիային թույլ է տալիս նաեւ եզրակացնել, որ բժշկական օգնության ցուցաբերումը, բացի Բժշկական օգնության մասին արձանագրությամբ եւ աշխատանքի տեղավորման պետության՝ բժշկական օգնություն ցուցաբերելու մասին այլ միջազգային պայմանագրերով ուղղակիորեն կարգավորվածից, ապահովվում է այն կարգով եւ պայմաններով, որոնք սահմանված են այդ պետության ազգային օրենսդրությամբ:

19. Բժշկական օգնության մասին արձանագրությամբ անդամ պետությունները սահմանել են իրենց տարածքներում անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին արտակարգ եւ

անհետաձգելի ձեռքով շտապ բժշկական օգնություն ստանալու իրավունքների տրամադրման միասնական ռեժիմ:

Ընդ որում, հարկավոր է նշել, որ նշված ձեռքով շտապ բժշկական օգնություն ասելով, Արձանագրության 2-րդ կետը նկատի ունի բժշկական ծառայությունների համալիր, որոնք տրամադրվում են սուր հիվանդությունների, դժբախտ պատահարների, վնասվածքների, թունավորումների եւ այլ վիճակների դեպքում, որոնք վտանգ են ներկայացնում պացիենտի կյանքին (արտակարգ ձեւ), ինչպես նաեւ հանկարծակի սուր հիվանդությունների, վիճակների, քրոնիկ հիվանդությունների սրացումների դեպքում՝ առանց նման վտանգի ակնհայտ նշանների (անհետաձգելի ձեւ):

Բժշկական օգնության մասին արձանագրության 4-րդ կետի դրույթներին համապատասխան՝ շտապ բժշկական օգնությունը (արտակարգ եւ անհետաձգելի ձեռքով) անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքի անդամներին աշխատանքի տեղավորման պետության տարածքում տրամադրվում է անվճար՝ նույն կարգով եւ նույն պայմաններով, ինչ որ այդ պետության քաղաքացիներին:

Բժշկական կազմակերպության (առողջապահական հիմնարկի)՝ անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքի անդամներին ցուցաբերված շտապ բժշկական օգնության (արտակարգ եւ անհետաձգելի ձեռքով) ծախսերի փոխհատուցումն իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության բյուջետային համակարգի համապատասխան բյուջեների հաշվին՝ առողջապահության ֆինանսավորման գործող համակարգին համապատասխան:

Ընդ որում, շտապ բժշկական օգնությունը (արտակարգ եւ անհետաձգելի ձեռքով) ցուցաբերվում է աշխատանքի տեղավորման պետության պետական եւ մունիցիպալ առողջապահական համակարգերի բժշկական կազմակերպությունների (առողջապահական հիմնարկների) կողմից անվճար՝ անկախ նրանից, թե արդյոք շտապ բժշկական օգնությունը մտնում է պարտադիր

բժշկական ապահովագրության ծրագրի մեջ, ինչպես նաև անկախ պացիենտի՝ բժշկական ապահովագրական պոլիսի առկայությունից:

20. Բժշկական օգնության մասին արձանագրությունը կանոնակարգում է նաև իրավահարաբերություններն աշխատանքի տեղավորման պետության բժշկական կազմակերպությունում (առողջապահական հիմնարկում) բուժումը շարունակելու դեպքում:

Արձանագրության 5-րդ կետի դրույթներին համապատասխան՝ պացիենտի կյանքին կամ շրջապատի մարդկանց առողջությանն սպառնացող անմիջական վտանգը վերացնելուց հետո աշխատանքի տեղավորման երկրի բժշկական կազմակերպությունում (առողջապահական հիմնարկում) բուժումը շարունակելու դեպքում տրամադրված ծառայությունների փաստացի արժեքի վճարումն իրականացվում է անմիջականորեն պացիենտի կամ այլ աղբյուրների կողմից, որոնք արգելված չեն աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ, սակագներով կամ պայմանավորված գներով:

Անհրաժեշտ է նշել, որ տվյալ դրույթը լիովին համապատասխանում է Բժշկական օգնության մասին արձանագրության 3-րդ կետի դրույթներին եւ սույն Խորհրդատվական եզրակացության 18-րդ կետի այն եզրակացությանը, որ բժշկական այլ օգնության ցուցաբերումը, բացի Միության իրավունքով եւ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով ուղղակիորեն կարգավորվածից, ապահովվում է աշխատանքի տեղավորման պետության ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով եւ պայմաններով:

Այն հանգամանքը, որ «աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների» կոնկրետ ցանկը Բժշկական օգնության մասին արձանագրությունը եւ Պայմանագիրը չեն բացահայտում, Դատարանի մեծ կոլեգիայի կարծիքով թույլ է տալիս այդ նպատակների համար օգտագործել ցանկացած օրինական աղբյուր (այդ թվում՝ աշխատողի գործատուի միջոցները՝ աշխատանքային պայմանագրով նախատեսված դեպքերում, վարկերը, հարազատների եւ մերձավորների օգնությունը, ապահովագրավճարները): Հաշվի առնելով պարտադիր բժշկական ապահովագրության էությունը եւ նպատակները՝

ապահովագրված անձանց բժշկական օգնության ցուցաբերումը հնարավոր է նաև պարտադիր բժշկական ապահովագրության միջոցների հաշվին:

21. Դատարանի մեծ կոլեգիան վերոշարադրյալի հիման վրա ներկայացնում է հետևյալ պարզաբանումները.

21.1. Պայմանագրի 98-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է Միության անդամ պետությունների պայմանավորվածությունը՝ աշխատանքի տեղավորման պետությունում նախատեսված սոցիալական ապահովությունը (սոցիալական ապահովագրությունը), այդ թվում՝ պարտադիր բժշկական ապահովագրությունը, անդամ պետությունների աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների համար իրականացնել նույն պայմաններով եւ նույն կարգով, ինչ որ աշխատանքի տեղավորման այդ պետության քաղաքացիների համար: Պարտադիր բժշկական ապահովագրության իրականացման պայմանները եւ կարգը՝ ներառյալ դրա ֆինանսավորման աղբյուրները, ցուցաբերվող բժշկական օգնության տեսակներն ու ծավալները սահմանվում են Միության այն անդամ պետության ազգային օրենսդրությամբ, որի տարածքում իրականացվում է աշխատանքային գործունեությունը:

21.2. Պայմանագրի շրջանակներում անդամ պետությունների աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների՝ բժշկական օգնություն ստանալու իրավունքի կարգավորման կարգը սահմանվում է Պայմանագրի 98-րդ հոդվածի 4-րդ կետի եւ Բժշկական օգնության մասին արձանագրության (Պայմանագրի թիվ 30 հավելված) այն դրույթներով, որոնք չեն կանոնակարգում պարտադիր բժշկական ապահովագրության հարցերը:

Բժշկական օգնության մասին արձանագրության նպատակների համար պարտադիր բժշկական ապահովագրության միջոցները կարող են հաշվի առնվել ապահովագրված անձանց բժշկական ծառայությունների մատուցման ծախսերի փոխհատուցման ժամանակ:

IV. Եզրափակիչ դրույթները

22. Սույն Խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին:

23. Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Ա.Ա. Դրոնով

Դատավորներ՝

Է.Վ. Հայրիյան

Դ.Պ. Ալեքսանդրով

Կ.Կ. Ջունուշյան

Ա.Ա. Զաքարյա

Ե.Ժ. Իսմայիլով

Մ.Տ. Կայիպով

Ա.Բ. Կիշկեմբաև

Ն.Վ. Պավլովա

Ա.Գ. Թունյան